ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 փետրվարի 2024 թվականի N 197 - Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 3-Ի N 737-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հուլիսի 3-ի «Պետական իշխանության մարմիններում քաղաքացիական աշխատանք կատարող և տեխնիկական սպասարկում իրականացնող անձանց պաշտոնային դրույքաչափերը սահմանելու մասին» N 737-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) 1-ին կետի 6-րդ ենթակետում «:» կետադրական նշանը փոխարինել «.» կետադրական նշանով և կատարել հետևյալ լրացումները՝

1) որոշման 1-ին կետը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-րդ ենթակետով.

«7) Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի միջուկային անվտանգության, ճառագայթային անվտանգության և տեխնիկական ստորաբաժանումների քաղաքացիական աշխատանք կատարող անձանց հավելավճարների վճարման պայմանները, դեպքերը, կարգը և չափերը՝ համաձայն N 7 հավելվածի:».

2) որոշման N 1 հավելվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր բաժնով.

«

ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՄԻՋՈՒԿԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ, ՃԱՌԱԳԱՅԹԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԵՎ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԻ ՄԱՄՆԱԳԵՏՆԵՐ		
111.	պետ՝ վարչության-պետական տեսուչ	6.45
112.	պետ՝ բաժնի (վարչությունում գործող)-պետական տեսուչ	6.05
113.	պետ՝ բաժնի-պետական տեսուչ	5.1
114.	գլխավոր պետական տեսուչ՝ վարչությունում գործող բաժնի	5.1
115.	գլխավոր պետական տեսուչ՝ բաժնի	4.1

».

3) որոշումը լրացնել նոր՝ N 7 հավելվածով՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի միջուկային անվտանգության, ճառագայթային անվտանգության և տեխնիկական ստորաբաժանումների քաղաքացիական ծառայության պաշտոններն անվանացանկից հանելու և դրանք քաղաքացիական աշխատանք կատարողների պաշտոններ նախատեսելու, քաղաքացիական ծառայողներին համապատասխան քաղաքացիական աշխատանք կատարողի պաշտոնում նշանակելու դեպքում (օրինակ՝ վարչության պետի պաշտոնից ազատելու վարչության պետի պաշտոնում նշանակելու դեպքում) նրանց՝ քաղաքացիական ծառայողի վերջին պաշտոնի պաշտոնային դրույքաչափը պահպանվում է, եթե սույն որոշմամբ համապատասխան պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի որոշման գործակիցը ցածր է քաղաքացիական ծառայության այդ պաշտոնի համար սահմանված պաշտոնային դրույքաչափի որոշման գործակցից: Այս դեպքում տվյալ աշխատողի պաշտոնային դրույքաչափը պահպանվում է մինչև այն պահը, երբ սույն որոշմամբ սահմանված կարգով որոշված պաշտոնային դրույքաչափն ավելի բարձր կլինի սույն կետի համաձայն պահպանված պաշտոնային դրույքաչափից:

3. Հայաստանի Հանրապետության միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի նախագահին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո՝

1) եռամսյա ժամկետում ընդունել սույն որոշումից բխող իրավական ակտերը.

2) երկամյա ժամկետում հաստատել միջուկային անվտանգության կարգավորման կոմիտեի միջուկային անվտանգության, ճառագայթային անվտանգության և տեխնիկական ստորաբաժանումների քաղաքացիական աշխատանք կատարող անձանց պաշտոնների նկարագրերը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

09.02.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ